



ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 8-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Հայոց Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի 1977—1978 ուսումնական տարվա վերաբացման հանդիսությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը:

Վեհափառի թիվ արտասանած «Հայր մեր»-ից հետո, հոգևոր ճեմարանի սաները երգում են «Աշակերտք Քրիստոսի» շարականը: Ապա հոգևոր ճեմարանի ավագ վերակացու տ. Արտակ քհն. Սիմոնյանը ընթերցում է Մարկոսի Ավետարանից «Սերմնացանի առակը» (Մարկ. Լ.Դ), որի ընթերցումից հետո ճեմարանի Բ լսարանի ուսանող Վստիրամ Տերտերյանը ընթերցում է ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» գրքից սուրբ Հոգուն ուղղված աղոթք-աղերսը (Բան Լ.Դ):

Այնուհետև հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը կատարում է հանդիսության բացումը: Տեսուչ հոր բացման խոսքի մեջ ընդգծվեց հատկապես հոգևոր ճեմարանի՝ անցյալի և ներկայի խոշոր դերի մասին, որ կատարել է մեր եկեղեցու և ժողովրդի կյանքում: Նա վստահեցնում է Վեհափառ Հայրապետին, որ տեսչությունը, դասախոսական կազմը և ուսանողությունը խղճի մտոք կկատարեն իրենց վրա դրված պարտականությունները այս ուսումնական տարում ևս՝ ի մխիթարություն Վեհափառ Հայրապետի:

Ապա տեսուչ հայրը հրավիրում է Վեհափառ Հայրապետին Իր պատգամը տալու ճեմարանի դասախոսությանն ու ուսանողությանը, 1977—78 ուսումնական տարվա առթիվ:

Վեհափառ Հայրապետն ասում է.

«Այսօր ներկա լինելով մեր հոգևոր ճեմարանի բացման հանդիսության, հիշում ենք հանգուցյալ Գևորգ Զ մեծ կաթողիկոսը, որ 1945 թվին, իր ընտրությունից հետո, մի օր, նեղ շրջանակի մեջ, Հին Վեհարանում, մեծ հուզումով, կարող ենք ասել երեխայական հրճվանքով էր խոսում այն մասին, որ երկար տարիների դադարից հետո պիտի վերաբացվի ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը:

Այն ժամանակ հանգուցյալ Հայրապետի շուրջ միայն մի քանի տարեց հոգևորականներ կային: Երիտասարդներ չկային: Հույսը միայն կար, ապագային հոգևորական նոր սերունդ պատրաստելու, նոր բացվելիք հոգևոր ճեմարանի սաներից: Տխուր էր հանգուցյալ Հայրապետը, որ այդ վիճակում է գտնվում Մայր Աթոռը, բայց և ոգևորված էր և թովում էր ուրախությունից, որ իր օրով պիտի կարողանա բաց անել դռները՝ տարիներից ի վեր փակված ճեմարանի: Լսելով ծերունազարդ Հայրա-

պետի խոսքերը և զգալով նրա հուզումը, մենք էլ էինք հուզվում և ուրախանում և տեսնում էինք ապագան՝ ավելի պայծառ ու փայլուն:

Իրապես հոգևոր ճեմարանը բացվեց, հավաքվեցին երիտասարդ տղաներ և այդ օրվանից ի վեր, ավելի քան 30 տարիներ, ճեմարանը կանոնավորապես գործեց:

Տարիների ընթացքում բազմահարյուր երիտասարդներ եկան ու անցան, բայց դրժբախտաբար այդ շատերից շատ քչերը մընացին հավատարիմ իրենց խոստմանը, շատ քչերը իրապես արժանավոր հոգևորականներ մնացին մինչև վերջ:

Դժբախտությունը ունեցանք հաստատելու, թե շատ քչերն են հասկանում իմաստը և կարևորությունը մեր գործի, շատ քչերն են հասկանում առաքելությունը Մայր Աթոռի, հայ ժողովրդի կյանքում ա՛յստեղ և արտասահմանում, որ շատ քչերն են հասկանում բարոյական գեղեցկությունը ս. Ավետարանի ճշմարտությունների, մնալու համար անբասիր և ազնիվ հոգևորականներ: Ոմանք նույնիսկ ամբողջ Ավետարանից միայն «Անիրաւ տնտես»-ի առակն են հասկանում, շուռ տված ձևով: Մենք այս խոսքերը հատկապես ուղղում ենք մեր երիտասարդներին, ձեզ՝ ուսանողներիդ: Ոչ ոք չկարծի, թե այստեղ սովորական մի դրպրոցի նման ինչ-որ գիտելիքներ պիտի սովորի և հետո աստիճաններ ստանա: Բնավ այդպես չէ: Անշուշտ գիտելիքները կարևոր են: Բոլոր առարկաները, որ ավանդվում են, դրանք օգտակար և անհրաժեշտ գիտելիքներ են, զարգացնելու համար ձեր միտքը և հարստացնելու ձեր գիտելիքները: Բայց դրանք բոլորը բավական չեն: Մենք միշտ շեշտել ենք, և բոլոր դասախոսներն էլ շեշտում են այս հարկի տակ, որ այստեղ ուսման տարիների ընթացքում անհրաժեշտ է ձեր հոգու մեջ զորացնեք կրոնական հավատքը և մանավանդ կազմեք ձեր մեջ բարոյական նկարագիր, որ ամենակարևոր տվյալն է մի հոգևորականի համար:

Երևակայեցեք մի հոգևորական, որ ստախոս է և խաբեբա, որ արծաթասեր է ու ընչաքաղց, որ անազնիվ միջոցներով հարըստանալ է ուզում՝ չարաշահելով իր դիրքն ու պաշտոնը, նախանձում է իր ընկերների վրա, բամբասում ու զրպարտում է նրանց, որ զուրկ է բարոյական գիտակցությունից: Այսպիսի մեկը հոգևորական չի կարող լինել, այդ անկարելի բան է: Ա՛յդ ժխտումն իսկ է հոգևոր առաքելության և կոչման:

Մենք գոնե ինչքան կաթողիկոս ենք, այսպիսիներին չենք հանդուրժել և չենք էլ հանդուրժելու: Այս նկատում ենք Մեր սեպուհ պարտականություններից մեկը: Հետևաբար, ձեզ բոլորիդ, երիտասարդներ, զգուշացնում ենք, որ ձեռք բերեք այնպիսի ազնիվ բարոյական նկարագիր, որ հիմնված լինի Ավետարանի պատվիրանների վրա: Դրանք դատարկ խոսքեր չեն, ժամանցված ճշմարտություններ չեն, այլ հավիտենապես այժմեական պատվիրաններ:

Այո՛, այսօր էլ հոգևոր բարոյական այդ պատվիրանները մնում են այժմեական և փայլում՝ ադամանդի նման մարդկային կյանքի հորիզոնի վրա: Բոլոր ազնիվ մարդիկ, և անշուշտ ազնիվ մարդիկ շատ կան աշխարհում և մեզ մոտ, վերջիվերջո բարոյական հաղթանակը պիտի տանեն ընդդեմ բոլոր տեսակի կեղծիքների ու չարիքների: Մեր, հոգևորականներիս պարտականությունն է օգնել այդ ազնիվ մարդկանց և մասնակցել այդ բարոյական պատերազմին: «Բարւոք պատերազմ» է այդ, որի մասին խոսում է Պողոս առաքյալ: Ի՞նչ ենք հասկանում «Բարւոք պատերազմ» ասելով: Խոսքը՝ զենքերով պատերազմի մասին չէ, այլ այն աշխատանքի ու պայքարի մասին, որով պիտի կարողանանք նպաստել, որ մարդու և ընկերության բարոյական դիմագծությունը բարելավվի, բարեփոխվի, գեղեցկանա: Քրիստոնեությունը մտածում է ոչ միայն անդենական կյանքի, հավիտենական կյանքի, այլ մտածում է նաև երկրային կյանքի մասին, ավելի արդար, ավելի բարոյական, ավելի մարդասեր հարաբերություններ ստեղծելու համար մարդկանց և ժողովուրդների միջև, այս աշխարհի վրա: Այս է գլխավոր առաքելությունը քրիստոնեական եկեղեցիին մարդկային կյանքում:

Հետևաբար, սիրելի ուսանողներ, լսեցեք ձեր դասախոսներին, ձեր դաստիարակներին, լսեցեք Մեզ: Մենք հաճախ պիտի խոսենք ձեզ այս մասին տարբեր առիթներով: Օգնեցեք մեզ, որպեսզի կարողանանք ձեզ դաստիարակել ա՛յս ոգով և դուք կարողանաք ի վիճակի լինել հասկանալու բարոյական գեղեցկությունը հոգևոր կյանքի: Մենք մաղթում ենք, որ հետզհետե բանաք ձեր հոգու աչքերը և դառնաք ավելի ազնիվ տղաներ, թոթափեք ձեր վրայից այն հոռի հատկությունները, թերությունները, որոնց մասին մի քիչ առաջ խոսեցինք:

Ահա այս սպասումներով բացում ենք նոր դպրոցական տարեշրջանը, մաղթելով ձեզ աստվածային շնորհներ, ներքին հոգևոր եռանդ, բարի կամեցողություն, որպեսզի դուք կարողանաք բոլորել մի տարեշրջան՝

ժիր աշխատանքի, մշտատև ուսումի և մանավանդ բարոյական նկարագրի կերտումի»:

Այս տարի էլ հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը գլխավորում է Վեհափառ Հայրապետը, որը դասավանդում է Հոգեբանություն առարկան:

Ուսուցչական կազմի մեջ գրեթե փոփոխություն չի կատարվել: Հոգևոր ճեմարանի այս տարվա ուսանողների թիվը 27 է, որոնք բաժանված են չորս դասարանների վրա:

Բ դասարան՝ 7 հոգի.
Գ դասարան՝ 7 հոգի.
Ա լսարան՝ 6 հոգի.
Բ լսարան՝ 7 հոգի:

Սեպտեմբերի 9-ին, ուրբաթ օրը, հնչեցին հոգևոր ճեմարանի ուսումնական տարվա առաջին զանգերը, և ճեմարանում կանոնավորությամբ սկսվեցին 1977—1978 ուսումնական տարվա դասընթացները: